



Օ Ր Ա Գ Ի Ր

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԵՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ե Ի

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ 19.

1846

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Նորոգացող և Դաստիարակացող Գիտնական Կարկասոր սկզբունքներ :

Մեկ տղայ մը աղէկ բնաւորութի չունենայ նէ ալ՝ աղէկութեան յարգը կը ճանչնայ . անոր համար ծնողքն ու վարպետները ոչ երբէք յոյսերնին պիտի կտրեն տղու մը շտկուելէն , մանաւանդ քանի որ տղան պզտիկ է ու բնաւորութիւնները թարմ ճիւղերու պէս որ դին ուզէս կրնաս դարձնել :

Երբոր տղու մը խրատ կուտաս կամ աղէկութիւնը կը գովես նէ՝ նայէ թէ ինչ շարժումնք կամ ինչ գիրք կ'ունենան պուկունքները . անով կ'իմանաս թէ խրատդ կամ գովասանքդ ինչ ազդեցութիւն կ'ընէ տղուն վրայ : Ըս պուկունքներուն շարժումը այնպիսի բան մըն է որ ասանկ կամ անանկ բունելը ոչ ծնողացը և ոչ տղուն ձեռքն է , հապա տղուն սրտին շարժմանցը նշանն է :

Մեծ ու հարկաւոր կըթուլիւն է տղոց ձայնին չափ դնելը : Տղուն չափէ դուրս յանկարծ յանկարծ կանչուրուտելը վայրենութեան ու անկրու

թութեան նշան է . բայց հարկաւոր ատեն ալ քթին տակէն կամ փսփոսալով խօսիլը՝ նոյն անկրթութեան վրայ ապշուլիւն մըն ալ կը ցուցնէ : Ըս երկու պակասութիւնն ալ խիստ շատ կ'երևնայ ընդհանրապէս արևելեան տղոց դաստիարակութեք մէջ . ուստի զարմանք չէ որ շատ տղաք մեծնալէն մարդ ըլլալէն ետև ալ մարդու պէս խօսիլ չեն գիտնար . համրի պէս կամ բարկացածի պէս քթին տակէն խօսիլը պարկեշտութիւն կը սեպեն , կանչուրուտելով խօսին ալ կտրձութիւն . չեն իմանար որ մէկը ապշուլեան նշանն է , մէկալը խելքի պակասութե . խելացի մարդը հանդարտ ու յստակ ձայնով կը խօսի ու մտիկ ընել կուտայ , իսկ անխելքը պուռտալով ուրիշներուն գլուխը կը ցաւցընէ , ու խօսածները փուճը կ'երթան : Ա՛նչքան որ տղան չափաւոր ձայնով ու յստակ խօսիլ սորվի . օրինակը դուն տուր . վասն զի աս ու այսպիսի գործնական

խրատները խօսքով չեն սորվուիր, հապա միայն օրինակով :


Արքայ տղայ մը ուրախու թեան առանը կը կարմրի, աղէկ նշան է . ըսել է թէ ատենով զգուշաւոր ու խոհեմ մարդ պիտի ըլլայ :

Տղաք շատ անգամ որ կուլան՝ աւելի իրենց բարկութենէն է քան թէ ցաւ մը կամ նեղութիւն մը իմանալէն . ասիկայ աղէկ դիտելու բան է . վասն զի ասով ալ կ'իմացուի թէ տղան մեծնայ նէ՝ ինչ բնաւորութեան տէր մարդ պիտի ըլլայ : Ամանք կարծեն թէ տղուն լալը շատ անգամ իրեն ըրածին վրայ զղջալէն է, բայց կը խաբուին . անոր համար կուլայ տղան շատ անգամ որ ինչու ըրած պակասութիւնս իմացուեցաւ որ խօսք լսեցի :

Ղէկ տղան լացընելը մեղք է . բայց խնտացընելն ալ շատ անգամ աւելի մեղք է . պիտի նայիս որ տղան ուրախ զուարթ մեծնայ, բայց խենթութիւն ու բախուկի պէս չխեղեփնայ : Շատ զարմանալի են ան ծնողքն ու վարպետներն որ ինչուան չխնտացընեն տղան կ'իջացընեն՝ սրտերնին չհանդիւր :

Սիակերպ ծանր կենալն ու ժանիքընելը այնպիսի անհամբան մըն է որ ծերերն ալ չեն ակորժիր, ուր մնացին տղաքը : Թէ որ ատ ծանրութիւնդ ձեռացմունք է, ըսել է թէ երեսդ գիւմակ՝ դրեր ես . գիւցիր որ ան ատենը տղան ալ գիւմակ կ'անցընէ երեսը . ալ կրնաս նէ՝ ճանչցիր զինքը, կրնաս նէ խրատէ զինքը : Չափէ դուրս միակերպութիւնն ալ աղէկ նշան չէ՝ ոչ տղու և ոչ մեծ մարդու վրայ :

1 Սորաբ :



Առաջալէնան Արժարանին պարէկան բնուութենն ու պարգեալաշխուհիանը :

Սեբ ազգին հիմակուան միութարութիւնն ու պարծանքը իրեն առաջ երթալու ջանքն է միայն . անով է որ ամէն տեղ ու ամէն զլխաւոր քաղաքներու մէջ բացուած են մանր ու խոշոր դպրոցներ, ու ազգին նորաբոյս բողոքները անոնց մէջ կը բացուին ու կ'ուսուցանան, և իրենց ասպագայ պարզաբերութեան յուսովը թէ ծնողաց և թէ անխոնջ դաստիարակայ սիրտը կը զուարճացընեն : Տարուէ տարի վարժապետները իրենց աշակերտաց ջանքն ու յառաջագիւմութիւր երեւան կը հանեն, ու հրապարակաւ կը վարձատրեն անոնց ուսումնասիրութիւնն ու բարի վարքը . և չեմ գիտեր թէ որոնց ուրախութիւնն աւելի է . յառաջագիւմ աշակերտներունը թէ բազմարդին վարժապետներունը : Իսկ ծնողաց ուրախութիւնը ո՞վ կրնայ բացատրել, երբ որ մօտէն ալ չտեսնեն նէ՝ առ այժմ գէթ հեռուանց լսեն իրենց զաւակացը տարուէ տարի առաջ երթալը բարի վարքով ու գիտութեամբ : Ինչ ծնողքն որ տգիտութեան մէջ մեծցած ու մնացած են, և գիտութեան համը ամենեւին չեն առած, իրենց տգէտ զաւակացը հասակ նետելուն վրայ միայն կ'ուրախանան . ինչպէս որ կը տեսնենք ամէն բարբարոս ազգաց մէջ . բայց ուսման և գիտութեան յարգը ճանչցող ծնողքը իրենց զաւակին վարքն ու խելքը կը նային, և երբ որ ասոնց մէջ գովելի ու յառաջագիւմ տեսնեն՝ ան ատեն միայն ուրախութիւննին կատարեալ կ'ըլլայ :

Ինտարակոյս ենք որ ինչպէս Առաջալէնան վարժարանին վարժապետացը, նոյնպէս անոր փութաջան աշակերտներուն ծնողացը, նաև ամենայն ազգասիրաց ուրախութե պատճառ եղաւ աս տարի ալ նոյն վարժարանին հարցաքննութիւնն ու պարգեալաշխութիւնը, որ սովորական